

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2001թ. հունվար-մայիսին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 63,4 մլրդ. դրամ, որը 2000թ. մակարդակը գերազանցել է 1,4 %, 2001թ. մայիսի համախառն արտադրանքը կազմել է ապրիլի 189,5 %-ը (համադրելի գներով):

Հանրապետությունում ավարտին է մոտենում գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: Նախնական տվյալներով, 2001թ. հունիսի 1-ի դրությամբ, ընդամենը կատարվել է 167702 հա գարնանացան մշակաբույսերի ցանք, որը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցել է 45156 հա կամ 36,8%:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի գարնանացանի ընթացքը հանրապետությունում, նախնական տվյալներով

(հեկտար)

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել է		1.06.2001թ. %-ով 1.06.2000թ. նկատմամբ
	1.06.2001թ.	1.06.2000թ.	
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	99443	61663	161,3
Կարտոֆիլ	31678	28408	111,5
Բանջարանոցային մշակաբույսեր	19725	14451	136,5
Բոստանային մշակաբույսեր	3113	2714	114,7
Կերային մշակաբույսեր	12182	13154	92,6
Տեխնիկական մշակաբույսեր	1561	2156	72,4
Ընդամենը	167702	122546	136,8

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2001թ. հունիսի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)*, հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ
Արագածոտն	2,8	93,3	19,7	100,0	7,9	102,6
Արարատ	1,6	88,9	11,1	99,1	10,7	97,3
Արմավիր	1,7	94,4	11,3	100,9	12,7	71,0
Գեղարքունիք	4,0	95,2	27,9	99,6	11,4	96,6
Լոռի	3,1	103,3	19,7	100,0	5,9	96,7
Կոտայք	2,2	95,6	15,1	100,0	74,9	190,6
Շիրակ	3,3	97,1	22,1	100,0	10,6	97,2
Սյունիք	2,0	87,0	14,3	100,0	4,8	96,0
Վայոց Ձոր	1,2	92,3	7,8	100,0	3,2	106,7
Տավուշ	2,0	90,9	12,3	99,2	7,9	97,5
ք.Երևան	0,2	100,0	1,1	100,0	15,0	135,1
Ընդամենը ՀՀ	24,1	94,1	162,4	99,8	165,0	125,0

*) Ներառյալ ներքին սպառումը:

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2001թ. հունվար-մայիսին իրացվել է 24,1 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը զիջել է 2000թ. ցուցանիշը 1,5 հազ. տոննայով կամ 5,9%, կաթինը՝ 0,4 հազ. տոննայով կամ 0,2%, իսկ ձվի արտադրությունը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը 33,0 մլն. հատով կամ 25,0%: